Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն,
բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Է. Օրդուխանյան

«06» սեպտեմբերի 2023 թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Փիլիսոփայության տեսության և պատմության բաժնի 2023 թ. օգոստոսի 30-ի նիստի արձանագրությունից

Լսեցին - Թ.00.01 - «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքի ներկայացման հարցը:

Ելույթ ունեցան - Փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Սարվազյանը, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Մանասյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Արզումանյանը, բան. գիտ. թեկնածու Հ. Սարիբեկյանը և կրտսեր գիտաշխատող Ա. Սամարչյանը:

Որոշեցին - Թ.00.01 - «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ տալ հետևյալ եզրակացությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թ.00.01- «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեկնածուական ատենախոսությունը նվիրված է IV դարի հույն փիլիսոփա Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքների հետազոտությանը և միջնադարյան հայ գիտափիլիսոփայական մտքի զարգացման վրա դրանց ազդեցության վերլուծությանը: Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտության առարկան այնպիսի ժամանակաշրջան է, որն իր էական բնութագծերով առնչվում է ժամանակակից աշխահում տեղի ունեցող որոշ իրողությունների (համաշխարհայնացման գործընթաց, աշխարհայացքային և գաղափարական ճգնաժամ, ազգերի և պետությունների միջև միջմշակութային կապերի խորացում և այլն): Այս համատեքստում կարևորվում է յուրաքանչյուր ազգի ազգային-քաղաքակրթական ինքնության և մշակութային արժեհամակարգի պահպանումը, ինչը ենթադրում է ազգային ավանդույթների, գիտափիլիսոփայական մշակույթի ակունքների, պատմամշակութային փոխհարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրություն:

Սկզբնաղբյուրների և բազմաթիվ այլ աղբյուրների հիման վրա ատենախոսը վերլուծում է Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը, որում ներկայացված է բնափիլիսոփայական և մարդաբանական գիտելիքի զարգացման ուղին՝ Անտիկ դարաշրջանից մինչև վաղ միջնադար: Ուսումնասիրելով հայ փիլիսոփայության պատմաբանների աշխատությունները՝ ատենախոսն ընդգծում է, որ Նեմեսիոսի երկը բավարար ուսումնասիրված չէ փիլիսոփայության պատմության տեսանկյունից, մասնավորապես՝ լուսաբանված չեն Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը հայ գիտափիլիսոփայական մտքի զարգացման վրա:

Այս տեսանկյունից Կ. Մոսիկյանի ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող և պահանջված հետազոտություն է՝ փիլիսոփայապատմական գիտության բնագավառում: Դրանում առաջադրված նպատակն ու խնդիրներն ունեն հստակ ձևակերպումներ, նորարարական են և հիմնովին լուծվել են ատենախոսության համապատասխան գլուխներում և եզրակացության մեջ:

Առաջին գլխում վերլուծվում են Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական և մարդաբանական հայացքները: Հիմնավորվում է, որ քրիստոնեական եկեղեցու եպիսկոպոս Նեմեսիոսն իր երկում չի սահմանափակվում միայն աստվածաբանական խնդրակարգով, այլ կիրառում է թե՛ անտիկ փիլիսոփաների, թե՛ հայրաբանների առաջադրած գաղափարները: Շեշտելով աշխատության բացառիկ նշանակությունը միջնադարյան գիտափիլիսոփայական մտքի պատմության մեջ՝ Կ. Մոսիկյանը Նեմեսիոսի երկն իրավամբ գնահատում է՝ որպես մարդաբանության դասագիրք, որն ամփոփում է մարդու ստեղծման, նրա բնույթի, հատկորոշիչների, բնության մեջ նրա տեղի ու դերի մասին ուշագրավ տեղեկություններ: Փորձելով վաղ բյուզանդական շրջանի փիլիսոփայությունն ու բնագիտական գիտելիքը միաձուլել քրիստոնեական գաղափարախոսության հետ՝ Եմեսացին համակարգում է մարդու մասին ուսմունքները՝ դրանք ներկայացնելով մարդաբանական, տիեզերագիտական և բնափիլիսոփայական բնույթի քննարկումներով ու դրանցից բխող աստվածաբանական ու բարոյագիտական դրույթներով:

Ատենախոսության մեջ Նեմեսիոսը բնութագրվում է որպես հավաքաբան մտածող, ով մեկնաբանում է անտիկ և վաղ միջնադարի նշանավոր փիլիսոփաների տեսակետները տարբեր հարցերի վերաբերյալ՝ արտահայտելով իր հայեցակետը դրանց նկատմամբ: Շեշտվում է Նեմեսիոսի երկի առանձնահատուկ նշանակությունը՝ մարդաբանությունն իբրև ռացիոնալ գիտություն ներկայացնելու տեսանկյունից: Այսինքն՝ նա ձգտում է համադրել անտիկ բանապաշտական ավանդույթը քրիստոնեական սկզբունքների հետ, կրոնական ճշմարտությունները հիմնավորում է ռացիոնալ փաստարկներով:

Ատենախոսը մեկնաբանում է Ն. Եմեսացու տիեզերագիտության հիմնական գաղափարը, բնության խիստ նպատակային կարգուկանոնը՝ արտահայտված բնական և օրգանական որոշակի փուլերով, որոնց հանգուցալուծումը մարդն է: Ըստ նրա՝ պաշտպանելով արարչագործության սկզբունքը՝ Նեմեսիոսը աշխարհի երևույթների

լինելիության ընթացքը բացատրում է բնական ուղիով, հիմնավորում տիեզերքի մասերի փոխկապվածության ու բոլոր արարածների «ազգակցության» գաղափարը:

Գնահատելի է մարդու բնության, կարգավիճակի և հոգու մասին Նեմեսիոսի ըմբռնումների ատենախոսի վերլուծությունը: Քրիստոնեական մարդաբանության սկզբունքների հիման վրա ընդգծվում է մարդու առանձնահատուկ կարգավիճակը: Մարդը՝ որպես փոքր տիեզերք միավորում, ամբողջացնում է աշխարհը: Հիմնավորվում է, որ մարդու հոգուն է վերապահված մարմնի զգայական և բնախոսական գործառույթների իրագործումն ու վերահսկողությունը: Շեշտվում է բանական հոգու էական դերը, որին վերապահված է մարդու ազատ կամքի, ընտրության իրավունքի և անձնիշխանության գործառումը: Կարևորվում է նաև մարդու պատասխանատվությունը՝ իրեն շրջապատող աշխարհի ներդաշնակության պահպանման համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկի հայերեն թարգմանությանը և մեկնություններին, ինչպես նաև երկի ազդեցությանը միջնադարյան հայ մտածողների հայացքների վրա: Ատենախոսը կարևորում է վաղ միջնադարում Հայաստանի մշակութային կյանքում տեղի ունեցող ազգային, անտիկ և քրիստոնեական գիտելիքների համադրման գործընթացը, որի արդյունքում ձևավորվում էր ինքնատիպ ազգային մշակույթ՝ ընդգծված անտիկ միտվածությամբ: Ատենախոսին հաջողվել է հետազոտել Նեմեսիոս Եմեսացու երկի հայերեն թարգմանության ժամանակը (VIII դ.), հանգամանքները, փաստարկել միջնադարյան հայերեն մեկնությունները և ընդգրկվածությունը հայ մատենագիրների աշխատություններում: Հիմնավորվում է, որ երկը դարձել է հայկական գիտական շրջանակներում անտիկ գիտելիքի տարածման աղբյուր և միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման տեսական ակունքներից մեկը:

Ատենախոսն անդրադառնում է նաև «Մարդու բնության մասին» երկի հայերեն բնագրում կիրառված եզրաբանությանը, որը գործածվել և շրջանառվել է հայ մատենագրության մեջ: Փաստորեն՝ երկի հունաբան հայերենով թարգմանական բնագիրը նպաստել է հայերեն փիլիսոփայական լեզուն նոր եզրույթներով հարստացմանը: Էական նշանակություն ունի երկի մեկնությունների վերլուծությունը, որոնք վկայում են հայ հեղինակների ինքնուրույնության աստիճանը, առավել ևս՝ նրանց

ներկայացրած հավելյալ տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել միջնադարյան Հայաստանում գիտափիլիսոփայական գիտելիքի տարածվածության մասին:

Գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և արժեքավոր աշխատանքը, այնուամենայնիվ, հարկ է նշել որոշ դիտարկումներ.

1. Ատենախոսության մեջ առկա են վրիպակներ, որոնք անհրաժեշտ էր սրբագրել, ինչպես նաև տեխնիկական որոշ բացթողումներ (օրինակ՝ 2, 5, 8, 10, 11 և այլ էջերի տողատակերում նշված աշխատությունների հրատարակման վայրը բացակայում է):

2. Ատենախոսը կատարել է գիտափիլիսոփայական և աղբյուրագիտական լուրջ հետազոտություն, բայց ատենախոսության մեջ զգալի է հետազոտական նյութի համակարգվածության որոշակի պակաս: Նպատակահարմար կլիներ կրճատել որոշ կենսագրական, ժամանակագրական և այլ մանրամասներ, և աշխատանքը տրամաբանական շարադրանքի տեսանկյունից կլիներ առավել կառուցիկ:

3. Ցանկալի կլիներ, որ առավել հստակ ներկայացվեին Նեմեսիոս Եմեսացու երկի բուն աղբյուրները:

4. Եզրակացության մեջ առավել հանգամանալի պետք է ներկայացվեր հայ փիլիսոփայական մտքի վրա Նեմեսիոսի երկի ազդեցության աստիճանը:

5. Օգտագործված գրականության ցանկը ներկայացված է այբբենական կարգով, այնինչ նպատակահարմար կլիներ, որ նախ նշվեին սկզբնաղբյուրները, հետո ուսումնասիրությունները:

Նշված դիտարկումներն ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական և գործնական նշանակությունը:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեկնածուական ատենախոսությունը հայ փիլիսոփայապատմական շրջանակներում պահանջված, արդիական, գիտականորեն հիմնավորված աշխատանք է, որը կարևոր ներդրում է ՀՀ-ում փիլիսոփայական մշակույթի և աղբյուրագիտական հետազոտությունների զարգացման գործում:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը

միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» ատենախոսությունը լիովին համապատասխանում է Թ.00.01- «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին. և ատենախոսն արժանի է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի
Փիլիսոփայության տեսության և պատմության բաժնի վարիչ,
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ
Լ. Սարվազյան

Լ. Սարվազյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար
պատմ. գիտ. թեկնածու
Հ. Նազարյան